

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Маскъ“.
Այստեղ Tiflis, Redaction „Maschak“.
Տ է լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբանները ըստ 2 կոպէկի.
Տ է լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԿՐԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բազում մի խումբ հայ երիտասարդների նախաձեռնութեամբ, կիրակի օր, ամսիս 31-ին, պատարագից յետոյ՝ ս. Լուսաւորիչ եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ Վերաբերի խմբագրի:

ՍԻՄԵՕՆ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՅԻ

համար:

1—1

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Երկաթուղային հաղորդակցութեան զարգացումը. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ, Մասնաշաղկապներ. Նամակ երեւոյց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անդո-Տրանս-կասիան պատերազմը. Արտաքին լուրեր.—ՀԵՌՈՒԳԻՐՆԵՐ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հասարակական հոսանքներ:

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՐԱԳԱՅՈՒՄԸ

Վերջապէս իրադրութեան եղելութիւն է Անդրկովկասի հաղորդակցութեան հաստատելու երկաթ ուղու միջոցով եւրոպական Ռուսաստանի և Արեւմտեան Եւրոպայի հետ: Անդրկովկասեան երկաթուղու Բաւարի կայարանից դեպքերը կանոնաւոր կերպով գնում են դէպի Պետրոպոլս և միանում են հիւսիսի երկաթուղային ցանցին:

Երկաթուղային հաղորդակցութեան այդ նոր դիմը, բացի այն ընդհանուր նշանակութիւնից, որ ստանում է իբրեւ միացնող և շարժապող մի օղակ Անդրկովկասի և հիւսիսի մէջ, ունի մասնաւորապէս մեծ նշանակութիւն և այն տեղերի համար, որոնց մօտով նա անցնում է: Դուրայի և Դերբենդի շրջանները իրանց բնական հարստութիւններով բացում են արդիւնաւոր ծովածոցեան առաջ գործելու նոր նոր ասպարէզներ: Այդ տեղերը, ինչպէս այստեղի, է, բացի բազմազան և առատ գիւղատնտեսական արդիւնքից, հարուստ են և զանազան տեսակ հանքերով, որոնց մէջ նաւթը նշանաւոր դեր պէտք է կատարի: Դուրայի գաւառում գտնված նաւթահանքերը տալիս են նաւթ շատ նման Սմոլիկայի պենսիլվանեան նաւթին և դարձա-

րել են իրանց վրա զբաղմունքների ուշադրութիւնը:

Ինչպէս երևում է, մենք շուտով պէտք է ունենանք երկաթուղային հաղորդակցութեան մի նոր ցանց դէպի մեր սահմանակից երկրները: Պաշտօնապէս յանձնարարված է, որ մանրամասն կերպով ուսումնասիրվեն այն գծերը, որոնք կարող են կապել Անդրկովկասը Պարսկաստանի հետ և ուսումնասիրութեան կենտրոնը հետեւեալ ուղղութիւնները՝ 1) Անդրկովկասեան երկաթուղու Ալեքսանդրապոլից դէպի Բեշտ տանող գիծը, որ պէտք է անցնի Կասպից ծովի արեւմտեան ափով, Լենքորանի գաւառի միջով: 2) Նոյն երկաթուղու Նալախ կայարանից դէպի Սարըպատականի կենտրոնը՝ Փաւրիզ քաղաքը: 3) Արաքսի ափին գտնվող Զուլֆա տեղից մինչև Փաւրիզ և 4) Զուլֆայից Խոյի վրայով դէպի Աւրմիս: Անկասկած այս վերջին երկու ուղղութիւնները կապ պէտք է ունենան այն երկաթուղու գծի հետ, որ կը սկսվի Փիֆլիս-Կարսեան երկաթուղու մի կայարանից և կանցնի Արաքսի աւազանի հովիտով մինչև Զուլֆա: Պաշտօնական յանձնարարութիւնը պէտք է մինչև մի տարի կատարված լինի և բոլոր գծերի վերաբերեալ տեղեկութիւնները մշակված և համակարգված:

Անդրկովկասը այդպիսով մտնում է հաղորդակցութեան ձանաթարհների մի ընդարձակ ցանցի մեջ, որ ապագայում աւելի ևս կը ճիւղաւորվի և կընդարձակվի: Երկաթուղին մեծ և խոր ազդեցութիւն կը գործի երկրի տնտեսական վիճակի վրա և կը ստեղծի ազգայնականութեան և նրա արհեստագործութեան համար մի շարք նոր պայմաններ թէ նպաստաւոր և թէ աննպաստ: Անհրաժեշտ է այդ ազդեցու-

թեան բնաւորութիւնը ուսումնասիրել լուրջ կերպով և մշակել մի շարք նպատակայարմար միջոցներ, որպէս զի երկրի ազգայնականութիւնը կարողանայ պահպանել և զարգացնել իր տնտեսական բարօրութիւնը և չը դառնայ ստորակ նոր ստեղծված ծանր հանգամանքների առաջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Անցեալ սեպտեմբեր ամսի սկզբից Կ. Պոլսի հայ մամուլի մէջ տեղի ունեցաւ մէկ այն կերպարանափոխութիւններէ, որոնք այնքան սովորական են այնտեղ: Միայն անուշով գաւառական շաքարթանները դարձաւ ամենօրեայ լրագիր մի ինքնուրոյն ուղղութեամբ, որ զանազանում է նրան թիւրքահայերի միւս օրաթերթերից: Որքան կարողացանք իմանալ մեզ հասած համարներէ, նոր լրագիրը իր ծրագրի մէջ ուղղւած է միացնել ազգագրութիւնը, գիտութիւնը առօրեայ հրապարակաստութեան հետ: Առ այժմ կարող ենք ասել, որ այդ երեք բաժինները առաջ են տարվում եռանդով, մի հանգամանք, որ բաւական կենդանութիւն է հաղորդում լրագրին: Ձր գիտենք թէ որքան երկարա-կեաց կը լինի այսպիսի մի պարբերական հրատարակութիւնը, և այս երկամտութիւնը առաջ է դալիս այն հանգամանքից, որ չը գիտենք թէ որքան ամենօրեայ լրագրի ընթերցողը պատրաստված է առաւօտեան, լրագիրը բաց անելիս, կարդալ ոչ թէ առօրեայ հարցերի մասին մի յօդուած, այլ առաջնորդող տեղ դրած մի ուսումնասիրութիւն, օրինակ «Հանրային առողջութիւնը և մանրէները»: Պէտք է, սակայն, նշանակել որ այս հանգամանքը շատ տարբերակ չի թւայ ընթերցողներին, քանի որ իւր բազմութիւնը գիտէ չափ պահպանել և այդ տեսակ յօդուածների հետ տալիս է և սովորական հրապարակաստութիւն: Նոր լրագրի գնահատելի յատկութիւններից մէկն էլ այն է, որ նա տեղ է տալիս գաւառային գրականութեան, մինչև անգամ սկսել է տպագրել մի մեծ վէպ գաւառական կեանքից: Գաւառը Կ. Պոլսի հայերի համար մեծ մասամբ արհամարհված է և տեղ է գտնում մամուլի մէջ միայն այն դէպքերում, երբ քահանայի, եպիսկոպոսի կամ կրօնափոխութեան հարց է լինում: Այս ցաւալի երեւոյթի-

պատճառը, անշուշտ, այն է, որ պոլսեցի հայը դեռ լաւ չէ հասկացել, որ գրականութեան առողջ նիւթեր մատակարարող ժողովուրդն է: Կ. Պոլսը բոլոր հանգամանքների մէջ իրանցից է տուել իբրեւ գաղթականութիւն, որ սերտ կապերով չէ կապված բուն երկրի, բուն ժողովրդի հետ: Այդ պատճառով չէ կարելի համակրութեամբ չը վերաբերվել «Մարկիզ» գաւառական բաժնին. ցանկալի է միայն որ գաւառը լոկ ազգագրական տեսակէտից չը ներկայանայ, ինչպէս այդ տեղի ունէր «Երեւան» շաքարթաններում, որի խմբագիրը այժմ նոյն լրագրի աշխատակցն է: Պէտք է, վերջապէս, ուսումնասիրել գաւառների տնտեսական, կրթական դրութիւնը, ցոյց տալ թէ ինչ ցաւեր ու պակասութիւններ կան այնտեղ: Նաու հետաքրքրական են պ. Խաչկունցի «Մեր հայկերէնները» վերջագրով մի շարք յօդուածները, որոնց մէջ համառօտ տեղեկութիւններ կան Թիւրքիայում ապրող զանազան ազգութիւնների մասին: Այդպիսի ուսումնասիրութիւնները մասնաւորապէս անհրաժեշտ են պ. իրական պահանջներին. մի ժողովուրդ իր բնականութեան տեղի, իր միջավայրի և շրջապատող հանգամանքների պտուղն է. մինչև ամեն ինչ լաւ չուսումնասիրվի, անկարելի կը լինի և պարզել այդ ժողովրդի իրական դրութիւնը: Մեր ընթերցողներին նոր օրաթերթի բարոյեցնելի հետ ծանօթացնելու համար վերցնում ենք մի առաջնորդող յօդուած, որի մէջ բացատրվում է այն ճիշդ օրէնքը, որ ասում է թէ մարդկային առաջադիմութիւնը, երջանկութիւնը ծնվում է տանգամանքներից, ցաւերից, մարդու մղած տոկոսն, յստիւս Կոնստանդին: «Ուրի առաջադիմութեան նախահարկն է»—ասում է գիտութիւնը: Եթէ մարդը չը զգար քաղցածութիւն, նա հնադարեան դիւատիչ և տափալաւ միտ վայրենուց այսօրվայ դրութեան չէր հասնի: Այդ հիման վրա էլ լրագիրը ասում է որ

բոլոր այն դժուարութիւններն որ կուգան մարդն ընկճել, ամէնքն ալ մէյնէկ զօրաւոր լծակներ եղած են որ մարդկային ազգի ընդունի ծովը: Երբեք միայն իրականութեան, անոր գործունէութիւնը կը խթանեն, և ընկերականութեան կապերը կամպայնդեն: Բայց այս ըսածներս, ընթերցող բարեկամ, չըլլայ որ երեսակայական գաւառացիները կարծէք, ոչ, ընդհակառակը, լաւ համոզուեցէ որ մենք ամէնքն ալ միշտ անհոգ ու անտարբեր վայրենիներ պիտի ըլլայինք, եթէ անդադար վերանորոգ պէտքը, ցաւն որ մեր գլխուն վրա կը հակեն, չը ստիպէին ամէն օր իրենց դէմ կռուիլ և յաղթելու: Դժբախտութիւններ ու-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Ա Ք Օ Ղ Ի Գ Ի Օ Ն Ի Գ Մ

II

Տիկին Զօգէֆին Բեռտլեր խաչակրաց արշաւանք սկսեց անառականութեան տները և առհասարակ կանոնադրված անառականութեան դէմ՝ իբրեւ քրիստոնեայ և իբրեւ ազատամարտ: Նոյն տեսակէտներով էր առաջնորդվում և նրա ամենաառաջին զինակիցներից մէկը՝ Ֆրանսիական սենատի անդամ Էլզովս դը Պրեսանտէ:

Ով կը համարձակի, ասում էր Պրեսանտէ, իր հառերից մէկում 1876 թիւն, երկակայել թէ ինչեր կը նկատէր Ամենակարողի աչքը, եթէ ուղէր թափանցել միմիայն մի գիշերվայ քողի միջով, դիտելու համար մեր նորագոյն քաղաքը: Կրթութեան մայրաքաղաքներից մէկը: Այդ փայլուն քաղաքներում կը տեսնէր նա բացված մի մեծ վաճառանոց: Ինչ են ծախում այնտեղ: Անմահ էակներ, ստեղծված Աստուծոյ պատկերով և փրկված Խաչածի արևմտով: Որ այդպիսի մի առևտուր գոյութիւն ունի, այդ ինքն ըստ ինքնան. չափից վեր ստակալ է. բայց ինչի՞րը աւելի ևս խորանում է, եթէ հարցնենք, թէ ով է այդ հոգեկների ու մարմինների վաճառանոցը: Բայց ով և կամ, եթէ ոչ ուղղակի բացողը, գոն թողարտողը, հովանաւորողը: Ամեն տեղ, ուր գոյութիւն ունի կանոնադրված անառականութեան

սխառն, ես պնդում եմ, որ տէրութիւնն է այդ առևտրով պարագողը, որովհետեւ նա է ապահովութեան վկայական տալիս այդ առևտրին... Ի հարկէ շատ անարդար կը լինէր ուղղակի անբարոյականութիւնը քաջաբերելու ցանկութիւն վերագրել այդ սխառնը ընդունող տէրութիւններին: Այ, ես շատ լաւ գիտեմ, որ տէրութեան զինաւոր հոգսը այդ բանում հասարակական առողջութիւնն է... Սակայն ում են փրկվում անառականութիւնը կանոնադրութեան ենթակողները: Ձր խօսենք կանանց մասին, նրանք այդ սխառնի անհրաժեշտ զոհեր են, բայց փրկում են արդեօք տղամարդկանց: Այ, ոչ չէն փրկում...:

Նոյն աշխարհայեացքին էր պատկանում և տիկին Էմիլի դը Մօրսիէ, որ իբրեւ արօյիցիոնիստական գաղափարների քաղաքիչ նոյնն է եղել Ֆրանսիայի աշխարհում, ինչ-որ Բեռտլերը Անդրկովկասում:

«Այն փաստը, ասում էր տիկին դը Մօրսիէ 1895 թիւն, որ գոյութիւն ունի սպիտակամորթ կանանց գերեզմանաւորութիւն, պարզ ցոյց է տալիս, որ ճիշդ չէ, իբր թէ համբերատարութեան տներում գտնված բոլոր կանայք իրանց կամքով են մտել այնտեղ... Օ, տիկիններ, մտածէ՛ք արդեօք, թէ ինչքա պէտք է անցած իրանց այդ թշուառ էակների գլխում ու սրտում: Նախ քան նրանց անկումը... Մեր բարեկամութիւններից մէկը, որ ապրում է մի ծովափնայ քաղաքում, գրում էր մեզ վերջերքս հետեւեալ եղեւրական խօսքերը:—Ես տեսայ ինչպէս մի օր այդ խեղճ կանայք խմբով գրում էին նաւահան-

դիստ, ծիծաղելով ու կատակելով: Եւ նրանցից մէկը գրում էր իրանց նայող մի տղամարդի (իրանց տան յաճախորդներից մէկին): «Մի զարմացէ՛ք, որ այսքան ուրախ ենք. շատ չի տեղի այս. մեզ տանում են Բիզա նաւաստիների համար. մի երեք շաքարթ անցած քաններս վերջացած կը լինի: Կը թափվեմք ծովը և էլ խօսող չի լինի: Առաւ: Ահա թէ ինչ է լինում սպիտակամորթ գերուհու վերջը: Բայց արդեօք բոլորովին մեռնակ է հասել նա այդ կէտին. չէ ունեցել արդեօք նա ուղեկիցներ, ընկերներ այդ անօթալի հանապարհում: Անշուշտ: Ամենից առաջ միջնորդը, որ ծախել է նրան 200, 300 կամ 500 ֆրանկով, նայած տարիքին ու գեղեցկութեան, և որ երկու տարի քանտ կը նստի, եթէ պատահաւոր ոստիկանութեան ձեռքն ընկնի: Այնուհետեւ գալիս է անառականութեան տան տէրը, որ գտնվում է օրէնքի հովանաւորութեան ներքոյ, և վերջապէս՝ յաճախորդը, գնողը. 6, յաճախորդի մասին չարժէ խօսել, նա միշտ կարգին մարդ է...»

Յիլիս Բօլէ (La prostitution au point de vue légal) աւելի ևս ծայրայեղութեան է հասնում անհասի ազատութեան տեսակէտը: Մարմին իմ սեփականութիւնն է, դատում է նա, և գուցէ միակ անվիճելի սեփականութիւնը, հետևաբար ես իրաւունք ունեմ վարվել մարմնիս վերաբերմամբ, ինչպէս սիրտս ուզի, ուրիշ խօսուածքով, ես իրաւունք ունեմ անբարոյական լինել և օրէնքը գործ չունի ինձ հետ, քանի որ ես իմ այդ իրաւունքս վայելելիս չեմ զրկւում ուրիշների իրաւունքներին և յատկապէս այն իրա-

ւունքին, որ է բարոյական լինելու իրաւունքը: Եթէ մի այդ և մի կին անառականութիւն են անում առանց միմեանց խաբելու, կամ միմեանց վրա բռնութիւն գործ դնելու, և առանց գայթակղութեան պատճառ լինելու ուրիշների վերաբերմամբ, նրանք չը պէտք է պատմվեն, որովհետեւ նրանց արածը հախառակ է բարոյականութեան պահանջներին, կրօնական պատկերներին, բայց ոչ արդարական օրէնքներին:

Կանոնադրված անառականութիւնը պէտք է մեր delenda Carthago-ն (կործանելիք Կարթագինէն) լինի, եղբակցներս: Եթէ ինչու Բօլէ և աշխատում է ապացուցանել, որ անառականութիւնը կանոնադրութեան ենթակողները ստեղծում և քաջալերում են այն, ինչ որ ցանկանում են վերացնել և պատմել:

«Առաջինը, ասում է նա, կանոնի ենթարկել անառականութիւնը կը նշանակի նայել անառակ կանանց վրա իբրեւ մի առանձին դասակարգի վրա կամ ուրիշ խօսքով ընդունել անառականութիւնը իբրեւ մի արհեստ, (և այդ է այդ սխառնի հիմնական արատը) և հովանաւորել այդ արհեստը, տալով նրանով պարագողներին—ճիշդ է, շատ կոշտ ու բարբարոսական պայմաններով—որոշ արտօնութիւններ և ապահովեցնելով նրանց քրոջանոց դէմ: Երկրորդ, անառականութեան կանոնադրութիւնը քաջալերում է տղամարդկանց և կանանց պարագել անառականութեամբ,—տղամարդկանց, որովհետեւ տալիս է նրանց, անառականութեամբ պարագելիս, ապահովութիւն հիւանդութիւններին դէմ (կարծեցեալ ապահովութիւն, ի հարկէ) և կանանց, որովհե-

բիշ ամէն բանէ աւելի յիշեցնել կուտան մարդոց թէ եղբայր են իրենց, թէ համբարաշխութեան շատ սերտ կապերով կապուած են իրարու, որոնցմէ ոչ ոք կրնայ ազատիլ: Բնութիւնն ամէն օր խիստ ու զփնդակ դասեր կուտայ մեղի, որոնցմէ պէտք է օգտուիլ գիտնանք: Շարժ, ողորդում, ժանտախտ, սով... այլ ինչ գիտնաւ: Ամէնքն ալ ահաւոր և աներևոյթ թշնամիներ, որոնց դէմ պէտք է օգի ի բռնի մարտեր:

Այս մարտական օրէնքը մի և նոյն ժամանակ ասում է, որ կուր մէջ անհետանում են ներքինը, որոնք վատովը գիտեն, որոնք չեն հասկանում, թէ մարտական հարկաւոր է, ինչպէս և անխառնափոխ: Այս «Մարդիկը» ասում է:

Յաւին ու տառապանքին առջև չը վատնիք, և ոչ իսկ պատուհաններէ վախենալը, իբրև ճշմարիտ մարդ տուկալու է այդ ամէնուն, և անոնց ամէն մէկէն օգտակար արդիւնքներ ձեռք բերել: Կենքի ամէնէն քաղցր հաճույքը մեր շուրջը վատացող դժուարութեանց մէջէն մեր հացը արիւրաբար խլելուն մէջ կը կայանայ: Վերջապէս, չէք տեսներ, ամէն երկրի մէջ գտնուած այնչափ նշանաւոր և մեծ մարդիկ ուրիշ երաժէշ են: Բոլոր այն հոգեկանոր գիտնանքն որ աշխարհ գիտնալով ու հնարքներով լեցուցին, և որոնցմէ մարդկութիւնը կօգտուի այսօր: Պէտք է ըսել որ անոնցմէ շատերն զգալիութեան մէջ ծնած են, և հակառակ իրենց կրած տառապանքին ու խոշորոտներուն, մեծցած են և հաստատակամ ճիշդերով իրենց անունն անմահացուցած են:

Տեղում, յարատև աշխատասիրութեան դադարներ չեն լինում մի ժողովրդի, որ ապրում է իր ճակատի քրտինքով, որ իր հողից պիտի դուրս հանէ իր երջանկութեան գրաւականը: շատ գեղեցիկ բան է և մենք հաւանում ենք այդ շնչով թիրեքանքների հրապարակախօսութեան մէջ: Հաւանում ենք և այն, որ «Մարդիկը» քաղցում է սէր և համբարաշխութիւն դաւանութիւններով բաժանուած հայերի մէջ: Բայց չենք հաւանում այն թեթևամտ, ծիծաղելի թղթակցութիւնները, որոնք գրվում են Վովկասից որոնց մէջ, որպէս թէ, մեր կենանքն են ուղում նկարագրել: Նրա կայացե՛ք, ընթերցող, «Մարդիկը» թղթակցից գտել է, որ բոլոր առևտրայեքը, սկսած խմորահրներից մինչև վերջին մանրավաճառը սիրուհիներն են պատմում... Ահա այդ պիտի լինար թղթակցութեան «Մարդիկը» պիտի ազատ պահէ իր ընթերցողներին: Եւ ինչ է ոչինչ չը գրել առևտրայեքի մասին, քան գրել այնպիսի բաներ, որոնք առևտուին այն կապացուցանեն թէ Կ. Պոլսի հայը աւելի հնչող կը ճանաչէ զուլումներին, քան մի քանի օրվայ ճանապարհով իրանից անջատուած հային:

Ինչ են բէկերը:—Անդրկովկասի այն տեղերում, ուր կայ թուրք ազգաբնակչութիւն, դուք կը տեսնէք անթիւ բէկեր. ամեն մէկը, որ կառողանում է դուրսը բարձր պահել, բազում օրս է գնում, հայտնում է գիւղացուին, գրեւորապէս գիտէ, եղել է որ և է պաշտօնատան մէջ և կրում է «կոկարդ»—բէկ տիտղոսն ունի: Իսկ «Կառնի» լրագիրը ասում է, որ դրանք ազնուականներ են, որովհետև դրանց պապերը խանութներն են բէկերը:—Անդրկովկասի այն տեղերում, ուր կայ թուրք ազգաբնակչութիւն, դուք կը տեսնէք անթիւ բէկեր. ամեն մէկը, որ կառողանում է դուրսը բարձր պահել, բազում օրս է գնում, հայտնում է գիւղացուին, գրեւորապէս գիտէ, եղել է որ և է պաշտօնատան մէջ և կրում է «կոկարդ»—բէկ տիտղոսն ունի: Իսկ «Կառնի» լրագիրը ասում է, որ դրանք ազնուականներ են, որովհետև դրանց պապերը խանութներն են բէկերը:

Այս հետաքննում է նրանց համար իրանց մարմնի վաճառումը, պարտաւորեցնելով նրանց կրկնել շարունակ իրանց անառակ վարմունքները այն օրից ի վեր, երբ նրանք ընկնում են անառակների ցանկը, և վերին աստիճանի դժուարացնելով նրանց համար վերադարձը դէպի ազնու և աշխատասիր կենքը: Կանոնադրութեան համաձայն անառակ կինը կարող է ջրնջել տալ իր անունը անառակների ցանկից միայն այն ժամանակ, երբ ապացուցանի, որ ունի ապրուստի ուրիշ միջոցներ: Հետևաբար, կամայականաց, նա պէտք է պարագլի իր անարգ արհեստով մինչև որ լաւ սովորի մի ուրիշ արհեստ, մի բան, որ շատ դժուար է նրա համար այն միջոցին, երբ նա պարտաւորված վարում է անառակ կենքը: Սրբորդ, կանոնադրութեան սխտեմի անկիւնաքան, sine qua non պայմանը, բռնկական քննութիւնն է, որ ամենամոտաբանող մի կամայականութիւն է կանանց ամբողջ մի դասակարգի և նոյն իսկ բոլոր կանանց վերաբերմամբ: Կանոնադրութիւնը, անկասկած, ի նկատի ունի անառակ կանանց, բայց բարբերի ոստիկանութեան ստորին պաշտօնեաները, որոնք ընտրվում են հասարակութեան տակաւնքից, ոչ անմեղանչելի են, ոչ էլ անսխալական: Նրանք կարող են սխալված ձևանալ, յաճախ իրօք էլ սխալվել, և ձեռքալեղծ ու բռնկական քննութեան ենթարկել ամենաազնիւ կանանց,— մի բան, որ իսկպէս շատ է պատահում... Սղի են դէպքեր, երբ ազնիւ կանայք և անմեղ օրերդներ մեկը են աստիկ յուզմունքից՝ այդպիսի անարգանքի ենթարկվելուց յետոյ: շատերն էլ ցնորվել են և ինքնասպանութեամբ

րի ժամանակ արտօնված դիրք են ունեցել, երբ են կառավարչներ. բէկերը այն հին (բայց ոչ բարի) ժամանակներում կազմում էին ազգաբնակչութեան ամենակրթված մասը և նրանց միջոց յաճախ դուրս էին գալիս զորքի և սրբատաղանդներ: Այս «Կառնի»-ն շատ է ցատու, որ այդ «տաղանդներ» ժառանգները այժմ չեն ճանաչված իբրև ազնուականներ. այդ պատճառով էլ բէկերը դրութիւնը անորոշ է մնացել, իսկ անորոշ մնալը շատ մեծ ազդեցութիւն է անում մեր ամբողջ երկրի բարոյական և տրեւտեալական դրութեան վրա:

Եթէ Բագրի լրագիրը տիտղոսների և անուններին համար է այդքան ցատակից ու վշտանար, նա պիտի գտնէ այնքանը հասկանալի, որ բէկերը, եթէ չունեն էլ ազնուականի անուն, բայց իրապէս վայելում են այն իրաւունքները, որ ունեն ազնուականները: Այս սակայն «տաղանդներ» այդ ժառանգները ինչ են արել մինչև այժմ երկրի տնտեսական կամ բարոյական առաջադիմութեան համար: Թող լրագիրը այդ հարցի պատասխանը գտնելու համար քրքրէ կողմանաւ քրէական դատարանների արխիւները: Փոխանակ անունների ետևից ընկնելու աւելի լաւ չէր քաղաքի «տաղանդներ» ժառանգների կողմուրական կենքի ամենատարբարական սկզբունքները: Բէկերը դրանց աւելի կարօտ են, քան ազնուական անունը:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«Մարդիկը» գործարանը կազմակերպութիւն, ընտրատեղի է և առողջապահութիւն, գրեց զօր. Ն. Տաղաւարեան. Կ. Պոլս, 1899.

Բժիշկ Տաղաւարեան մի քանի խոշոր աշխատութիւններ ունի: Մենք միշտ գովասանքով ենք խօսել հեղինակի նախընթաց գործածքների մասին, և մանրամասն քննադատել ենք նրա «Մարդիկները»: Նրա «Առողջապահութիւնը» մի խոշոր հատոր է կազմում, և թէ նրա ղեկավարութեան ու լուսաբանման և թէ ոճի ճոխութեան և պարզութեան նորոգի մի շատ բազմակողմանի և լրիւ տեղեկութիւն է տալիս առողջապահական բոլոր խոշոր խնդիրների մասին: Այս գիրքը կարող է ամեն բանից ընտանիքի սեղանի վրա պատուաւոր տեղ բռնել, գոնէ Պոլսի ընտանիքի, որովհետև մենք, առևտրայեքը, չափազանց շատ ենք զարգացած և այդ պիտի մայրենի լեզուով գրած գրքեր «լայնը» չենք անում կարգաւոր:

Նոյն գովասանքը չենք կարող տալ մեր առջև դրած գրքերին:

Գրքովը բաղկացած է 166 էջից, իսկ վերջում չորս էջի վրա գրված է գրքի մէջ պատահած բառերի ֆրանսերէն թարգմանութիւնը: Այս 166 էջից—60-ը, այսինքն մի երրորդից աւելին, նուիրված է արական և կանանց սեռական գործարանների անատոմիային, նկարներով հանդերձ: Գրքովի երկրորդ մասում հեղինակը խօսում է այս գործարանների առողջապահութեան մասին՝ թէ նրանց բնական և թէ անկանոն ու հիւանդական գործունեութեան

ազատվել այդպիսի անտանելի ամօթից... Վերջապէս, կանոնադրութեան սխտեմը իրաւունք է տալիս անչափահաս աղջկան դառնալ պաշտօնական անառակ կին, այսինքն ոտնատակ տալ իր և իր ընտանիքի պատիւը ու ծախել անդառնալի կերպով իր ազատութիւնը, մինչդեռ օրէնքը սահմանափակում է նոյն անչափահասների քաղաքացիական իրաւունքները, իրաւունքներ, որոնց ի շար գործ դնելուց կարող են վտանգվել անհամեմատ աւելի անհայն շահեր...: Շատ հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում պ. Ալֆ. դ. Մեթերսի գեղեցումը, որ նա ներկայացրել է արդիօրինակների ժողովին, 1897 թիւն, Բրիւսէլում, հետեւալ վերահարգով. «L'influence morale et sociale du régime de la police des moeurs»:

Բարբերի ոստիկանութիւնը, իր ներկայ ձևով, գոյութիւն ունի միայն մեր դարի սկզբից: Սկիզբն առնելով Պարիզից, նա տարածվել է հետզհետէ Ֆրանսիայի միւս քաղաքները և յետոյ Սլոպա ու Սլոպայից դուրս: Այդ սխտեմի ամենամեծ պաշտպանները բժիշկներն են, բայց նրանք էլ վաղուց սկսել են տատանվել, տեսնելով անդորութիւնը վնասեցնող հիւանդութիւնների տարածման դէմ, այսինքն այն բանում, որ այդ սխտեմի իրակ արդարացուցիչ հիմքն է, միակ raison d'être-ն է: Անառակ կանայք ամեն կերպ աշխատում են խուսափել ոստիկանութեան հսկողութիւնից, և այդ բանը աջողում է նրանց առանց մեծ դժուարութեան: Մի քանի միջոցներ կան դրա համար: Շատերը գտնում են մի-մի տղամարդ, որոնք համաձայնում են իրանց բռնունքներով պաշտ-

մէջ: Այս մասը բաժանված է զուլումների, որոնք են. Ամուրիութիւն, Սրբոնք և Գաղար, Ամուսնութիւն և ամուսնոյ ընտրութիւն, Սեռական անզգայնութիւն և չափազանց զգայնութիւն, Առաջատի զինք և Մեղաբալտիւն, Մերձաւորութեան պարտականութիւնը և մարդութիւն ամուլից, Գիշութիւն, Մերձաւորական նենգութիւնը, Անկարողութիւն, Ամուլութիւն, Մերձաւորական գործարանաց մի քանի հիւանդութիւնը, Անբարձրական հիւանդութիւնը, Առողջապահութիւն յղի կանանց և Յղութեան յարակից նախապաշարունակներ, Մենդաբութիւն, Սնամբ ծննդաբեր կանանց և նորածններու:—Ահա մի շարք վերին աստիճանի կարևոր խնդիրներ շօշափել է հեղինակը, և կարելիին չափ լուսաբանել և տուել պատշաճ առողջապահական խորհուրդներ:

Հեղինակը գրել է այս գրքիցը «երկսեռ երկտառաբար, չափահաս և նոյն իսկ ծերունի հասարակութեան» համար: Այստեղից պէտք է եզրակացնել, որ նա նշանակված է չափահասների ընթերցանութեան և ուրեմն սա պիտի ժողովրդական ընթերցանութեան նիւթ դառնայ, և իբրև այդպիսին՝ նա պէտք է համապատասխանի հանրամատչելի առողջապահական գրքի բոլոր պահանջներին:

Այն ինչ այս գրքումը ըզրորովին բաւարարութիւն չէ տալիս այդ պահանջներին: Հանրամատչելի առողջապահական գրքումը պիտի ունենայ ի միջի այլոց հետեւալ յատկութիւնները:

1) Նա պիտի ամփոփէ մի սահմանափակ նիւթ, օրինակ ամուսնութեան առողջապահութիւն կամ ժողովրդութիւն, կամ դաշտան, կամ վնասական հիւանդութիւններ, կամ առողջապահութիւն յղի կանանց և այլն: Երբ նիւթը սահմանափակ է, հեղինակը միջոց ունի մանրամասն ուսումնասիրելու և խնդրի բոլոր կէտերը չօշափելու:

Պ. Տաղաւարեանի գրքովը բաղկացած լինելով ընդամենը 170 էջից, որոնցից 60-ը (այսինքն 1/3) նուիրված է անատոմիային, չէ կառողջապահական և մանրամասն կերպով խօսել բազմաթիւ չօշափած խնդիրների մասին: Իսկ ժողովրդի անհրաժեշտ է տալ այն բոլոր անհրաժեշտութիւնները (չեղկնելով նոյն իսկ կրկնութիւններ անելուց), որոնք կարող են մի-մի և է գործնական նշանակութիւն ունենալ նրա համար: Վերջները մի հասարակ օրինակ:

Գաշտանը մի խոշոր երևոյթ է աղջկայ ֆիզիքական աշխարհում, և մեծ իրաւանցում, որը դուրս է գցում նրա նորարգը, նորակալով օրգանիզմի մէջ: Այս չրջանում խիստ հակելու է աղջկայ ընդհանուր առողջութեան վրա և մասնաւորապէս նրա սեռական գործարանների վրա: Սրբեմն ամենաթեթև անզգայնութիւն, ամենափոքր չեղումն առողջապահական պահանջներից կարող է մեծանշան ազդեցութիւն պատճառ դառնալ, և կնոջ առողջապահութիւնը մի շարք դրական նախազգուշացուցիչ խրատներ է տալիս այդ միջոցներում աղջկաների առողջութիւնը պահպանելու համար: Գերմանական, ֆրանսիական գրականութեան մէջ պակաս չեն

պահել նրանց՝ ոստիկանների դէմ: Այդ տղամարդիկ ապրում են նրանց անարգ վաստակով և, հետզհետէ իշխանութիւն ձեռք բերելով՝ նրանց վրա, սկսում են անխիղճ կերպով հարստանալ նրանց, բայց այդ ողորդելի կանայք գերադասում են այդ ստրկութիւնը ոստիկանութեան հսկողութիւնից, իբրև փոքրագոյն չարք: Մի ուրիշ միջոց: Անառակ կանայք իրանց եկամուտների բուն աղբիւրը ծածկում են մի-մի և է օրինաւոր պարագլուները ջողի տակ: Առեւելոյթ զբաղվում են ծխախոտ, ձեռնոց և այլն վաճառելով կամ գաղթարտներում ու սրճարաններում սպասաւորութիւն անելով:

Ձարմանալի չէ ուրեմն, որ ցուցակաբերված և անառակութեան տներում փակված անբարոյական կանանց թիւը տարեցտարի պակասում է, մինչդեռ ընդհակառակը աւելանում է գաղտնի անառակութեամբ պարագլուների քանակութիւնը: 1852 թիւն Սէնի դէպարտամէնտում (Ֆրանսիա) կար 219 ձարմարտարութեան տուն 1673 անառակ կանանցով. 1872-ին կար դեռ ևս 142 տուն 1126 կանանցով, իսկ 1895 թիւն միմիայն 50 տուն 468 կանանցով: Բրիւսէլում 42 անառակ տուն կար 1856 թիւն, իսկ 1895-ին միմիայն 7 հատ: Պարիզում ամեն տարի անառակութեամբ ցուցակաբերված անառակ կանանց մի հինգերորդ մասը և ոստիկանութիւնը ոչ մի կերպ չէ կարողանում ձեռքալեղծ նրանց: Ուր են գնում նրանք.— իհարկէ պարագլուի գաղտնի անառակութեամբ *):

*) Պարիզի «Journal de médecine»-ի խմբագրատեղ մէկի Լիւտո (Lutaud) ասում է, որ Պարիզում 2000 ցուցակաբերված անառակ կանանց դէմ կա 2 հարշիւ մօտ 300/000 կէն, որոնք պարագլու են:

ամբողջ տրակտատներ դաշտանին նուիրված, կան և հանրամատչելի խոշոր գրութեանքն արդ հարցին վերաբերելու: Ռուսաց թարգմանչական գրականութիւնը տուել է Պուրստի պատուական գրքը, որը շատ մատչելի գրութեամբ է ծնողների և աղջկաների համար, 127 ութամալ էջերից բաղկացած:

Դաշտանը ունի իր ֆիզիքական, իր առողջապահութիւնը, իր հիւանդութիւնները: Պ. Տաղաւարեանի գրքովում ֆիզիքական և հիւանդութիւնները միասին բանում են 1/2 էջ միայն, նոյնչափ և առողջապահութիւնը: Ակներն է, որ այդ խնդրով հետաքրքրող օրերով կամ մայրը, որ կուզենար իր աղջկան պատշաճ խրատներ տալ և պահպանել այդ կրկնի միջոցին, բաւարար ցուցումներ չեն կարող գտնել այս երկու երեք էջերում:

2) Ժողովրդական գրութեամբ մէջ պէտք է խուսափել անատոմիական և ֆիզիքական մանրամասնութիւններից, եթէ դուրս է պարզ և ամենքին հասկանալի ձևով ու ոճով բացատրել: Յարգելի բժիշկի գրքովը այդ կողմից էլ յարմար չէ ժողովրդական ընթերցանութեան համար: Նրա ֆիզիքական բացատրութիւնները յաճախ դժուար հասկանալի են: Նոյն դաշտանի բացումն նա բացատրում է այսպէս: «Արդանդի և ֆալլօպի խողովականց ներքին հոգաւարանութիւնը կը թանձրանայ, արեան հերափողկներով կը հարստանայ, առատ հոյզ կարտադրէ և վերջապէս վերամաշկեան խաւն իյնալով, հերափողկներն բաց կը մնան, կը բեկնան ու արեան հոսանք տեղի կուտան: Ի հարկէ, ով որ ուշագործութիւնով ուսումնասիրել է նրա անատոմիան, մի քիչ ճիշտ անելով կարող էր ըմբռնել հեղինակի միտքը, բայց բանն էլ այն է, որ շատ քչերն են ընդունակ զուլս կտորել այդ մանրակրկիտ և ոչ հետաքրքիր նկարագրութիւնները հասկանալու համար:

3) Սրբեք չը պէտք է անորոշ խորհուրդներ տալ, այլ հնչող պիտի որոշել այն պայմանները, երբ գործարարելու է այս ինչ կամ այն ինչ բուժական կամ պահպանողական միջոցը: Այսպէս այդ միջոցը վնաս կը բերի քան օգուտ: Տաղաւարեան դաշտանը բանալու համար առաջարկում է ի միջի այլոց «Վոգնա» (vogina—BLAGA) մէջ գրել ընկ տաք ջրով, կամ «Քուսոյի» մեծ ջրմանց վրա 6 հատ տարակ կպցնել: Ինձ թուում է, թէ այդ խորհուրդները գործարարութեան եղանակ և ժամանակը կը դժուարանալ որոշել մի ոչ-մասնագէտ, և հետեւաբար անզգայնութիւն կը լինէր այդպիսի միջոցներ տալ նրա ձեռքը:

(Կը շարունակվի)

ՆԱՄՍԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Հոկտեմբերի 24-ին

Այսօր քաղաքային տան դահլիճում տեղի ունեցաւ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վերջին ընդհանուր ժողովը, որին ներկայ էր նաև ոստիկանապետը: Այդ ժողովում կարգացվեց երկու շարաթ առաջ

Կանոնադրված անառակութեան հետևանքներից մէկն էլ լինում է կանանց գերեզմանառութիւնը: Այդ գերեզմանառութիւնը անհրաժեշտ է որպէս զի անառակութեան տները միշտ լիքը լինեն: Այն դէպքերը, երբ աղջկաներն տանում են օտար երկրներ, ուղղակի անառակութեան մատնելու համար, անհամեմատ սակաւաթիւ են քան այն դէպքերը, երբ նրանց գնում են անառակութեան տներին համար: Կարելի է պնդել թէ առանց անառակութեան տների գոյութեան չէր ունենալ կնաւաճառութիւնը: Արտասանման անտուրը միշտ աւելի դժուար, աւելի վտանգաւոր, աւելի անհաստատ ու անապահով է քան ներքին առևտուրը: Սթէ աշխարհում գոյութիւն չունենալին անառակութեան կազմակերպված ու օրինական տներ, արտասանող պէտք է ի նկատի ունենալ միշտ գնողների քանակութեան, և խաբէութեան ու բռնութեան գոհերը աւելի հնչող կը կարողանային վերադառնալ հայրենիք և զրկել միջնորդներին իրանց շահից, և նոյն իսկ պատասխանատուութեան ենթարկել նրանց: Բայց քանի որ գոյութիւն ունեն անառակութեան տներ, որոնք պահանջում են ամեն տեսակ «ապրանք» և որոնց պատերում խեղդվում է ամեն բողբոջ, կանանց տուտորով պարագլուները կարող են վտանգութեամբ համարել իրանց արհեստը ամենաապահով և ամենաշահաւէտ արհեստների թիւում:

(Կը շարունակվի)

Типографія Грузинск. Т.—ва Большая Ваневская ул., № 27